ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆՆԱ ԱԲՈՒՋԵՏԻ

ԿՈՎԿԱՍԻ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր **Ա.Վ. Աբրահամյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր Ի.Կ.Կարապետյան
Մանկավարժական գիտությունների դոկտոր **Պ.Հ. Գևորգյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է մարտի 28-ին ժամը 14:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. փետրվարի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա.Վ. Ավագյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Հայ մանկավարժության պատմագիտությունն ինքնատիպ է բազմաբնույթ: Նրան են նվիրված մի քանի տասնյակ ուսումնասիրություններ: Անհրաժեշտ է ընդգծել, որ որպես կանոն՝ հետազոտություններ կատարողների տեսադաշտից դուրս է մնացել շատ կարևոր դեր ու նշանակություն ունեցող հիմնահարց՝ ազգերի կրթվածության մակարդակի համեմատական բնութագիրը կազմելու անհրաժեշտությունը: Ահա թե ինչու մեր հետազոտությունը նվիրել ենք այդ թեմային:

Այդ տեսանկյունից կարևոր ենք համարում նաև քննարկվող ժամանակաշրջանում դպրոցական գործի և նրա զարգացման միտումների ուսումնասիրությունը, քանի որ դպրոցական գործի և ցանցի գործունեության բովանդակությամբ մեծապես պայմանավորված է ազգի կրթվածության մակարդակը:

Ուսումնասիրությունները վկայում են՝ ազգերի կրթվածության համեմատական բնութագիր կազմելը միայն կհիմնավորի հայերի մտավոր առաջադիմության հնարավորությունները: Հայերն առ այսօր առանձին գիտական հետազոտություն չեն նվիրել այդ կարևոր հիմնահարցին, որը համեմատական մանկավարժության հիմնախնդիր է:

Այսօր, երբ Ադրբեջանը փորձում է տեղեկատվական պատերազմի տարաբնույթ մեթոդներով և տեխնոլոգիաներով մտացածին կերպով «հիմնավորել» իր պատմական գերազանցությունը հայերի նկատմամբ, ստեղծել իր ազգի մշակույթի, պատմության, մտավոր ժառանգության մասին չափազանցված, իրականությանը չհամապատասխանող պատկերացումներ, մեր հետազոտության թեման դառնում է ավելի արդիական և հրատապ:

Մանկավարժական մտքի, դպրոցական ցանցի, կրթական համակարգերի զարգացման պատմությունն ուսումնասիրելու անհրաժեշտությունը հստակ է ընդգծվել «Մանկավարժության պատմություն» բուհական ձեռնարկում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ մանկավարժության պատմությունը ոչ միայն գաղափարների զինանոց է, այլ նաև համեմատումներ կատարելու առատ աղբյուր է: Ցանկացած տարածքում բնակվող ազգերը սահմանագծված չեն իրարից իրենց մշակույթով: Շատ դեպքերում ազգային մշակույթները աղերսվել են իրար հետ ոչ թե ցանկությամբ, այլ հաճախ ստիպողաբար: Ինչպես աշխարհի տարբեր մասերի ու տարբեր երկրների դպրոցական, այնպես էլ ընդհանուր կրթական գործի զարգացման միտումների հարաբերակցումը, օրինաչափությունների համեմատական բնութագրումը իրականացվում է համեմատական մանկավարժության միջոցով:

Համեմատական մանկավարժությանը բնորոշ չէ միայն համեմատումներ կատարելը: Այն ունի նաև տեսական բնույթ և գործնական նշանակություն:

Ֆրանսիացի Մարկ Անտուան Ժյուլիենը առաջինը ցույց տվեց այլ երկրների կրթական համակարգերի մասին տեղեկատվություն հավաքելու անհրաժեշտությունը, գործածության մեջ դրեց «համեմատական

մանկավարժություն» հասկացությունը, հիմնավորեց նրա խնդիրներն ու մեթոդները: Այդ շրջանում, Եվրոպայում մեծ տարածում է ստանում կրթական համակարգերի ուսումնասիրումը: Շատ անվանի հասարակական գործիչներ, մանկավարժներ ուսումնասիրում և կիրառում էին արտերկրյա կրթական փորձը (Կ. Դ. Ուշինսկի, Լ. Ն. Տոլստոյ, Մ. Առնոլդ, Հ. Հինդլյան և այլք): Այդ շրջանում վերահիմաստավորվում և վերամշակվում են հասկացությունները, փորձ է արվում ընդգծել ուսումնասիրության խնդիրների շրջանակները:

Միևնույն ժամանակ տարբեր երկրներում հրատարակվում են թերթեր ու ամսագրեր, որոնց էջերում լուսաբանվում են կրթական համակարգերին, կրթության բովանդակությանը և դաստիարակությանը վերաբերող բազում խնդիրներ:

20-րդ դարի առաջին կեսին ինտենսիվ աշխատանք է տարվում համեմատական մանկավարժության մեթոդաբանական հիմքերի մշակման ուղղությամբ, իմաստավորվում է գիտության առարկան, նպատակներն ու խնդիրները: Ամերիկայում և եվրոպական մի շարք երկրներում հրատարկվում են համեմատական մանկավարժության վերաբերյալ բազմաթիվ գրքեր (Պ. Սանդիֆորդա, «Համեմատական մանկավարժություն», ԱՄՆ, 1918թ, Լ. Կենդելա, «Համեմատական մանկավարժության ոլորտի հետազոտություններ», ԱՄՆ, 1933թ, Ն. Հենս, «Համեմատական մանկավարժություն», Անգլիա, 1949թ):

Արևմտյան շատ երկրներում կրթության ու դաստիարակության խնդիրների շուրջ հրատարակվում են մասնագիտական ամսագրեր, որոնց հոդվածներում համեմատվում են տարբեր երկրներում կրթական համակարգերի վիճակը, դրանց գործառնելիությունը տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես նաև դպրոցական համակարգի առանձնահատկությունները: Նշված բովանդակությամբ տեղեկատվությունը թույլ է տալիս կարծիք կազմել կոնկրետ ժամանակաշրջանում երկրի զարգացվածության, ազգաբնակչության կրթվածության մակարդակի մասին:

Ազգի կրթվածության մակարդակի մասին իրական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ուսումնասիրել և համեմատել պատմական կոնկրետ ժամանակաշրջանում կոնկրետ տարածաշրջանում հատկապես դպրոցական գործի զարգացման առանձնահատկությունները, ընթացքը, դպրոցի վիճակը՝ հենվելով համեմատական մանկավարժության հիմնական մոտեցումների վրա: Եվ, չնայած այլ ժողովուրդների և երկրների դպրոցների պատմությանը նվիրված հետազոտությունների բազմաքանակությանը, մեր կարծիքով, դեռևս լիովին չի ուսումնասիրված կովկասյան ազգությունների 19-րդ դարի երկրորդ կեսին Կովկասում դպրոցական գործի զարգացման միտումները, չեն բացահայտված Կովկասի ազգությունների կրթվածության մակարդակները և չի տրված դրանց համեմատական բնութագիրն ու գնահատականը:

Մեր հետազոտությունում փորձել ենք լրացնել մանկավարժության պատմության մեջ տեղ գտած այդ բացը և հնարավորինս համապարփակ ներկայացնել Կովկասի դպրոցական համակարգի ոչ միայն հանրագումարային պատկերը՝ ընդհանուր թվային վիճակագրական տվյալների և ընդհանրացված եզրահանգումների, որակական բնութագրումների և գնահատականների ձևով, այլև որոշակիորեն ճանաչված ուսումնական հաստատությունների և նույնիսկ

փոքր դպրոցների թեկուզև շատ համառոտ պատմությունը:

Գնահատումներ կատարելու համակարգի հիմնական մեթոդներից մեկը հանրագումարի բերված թվային տվյալների վիճակագրությունն ու նրա օբյեկտիվ վերլուծությունն է, որը տալիս է նաև մի շարք հարցերի պատասխաններ. «Արդյոք գործընթացում գոյություն ունի՞ առաջընթաց», «Ի՞նչ էական փոփոխություններ են տեղի ունեցել», «Որո՞նք են այդ գործընթացի թույլ կողմերը», «Ինչպե՞ս կարելի է հաղթահարել նկատված թերությունները», «Ինչքանո՞վ են օբյեկտիվ ու հիմնավորված կատարված ընդհանրացումները» և այլն: Վիճակագրական վերլուծությունը բացահայտում է գործընթացի վերաբերյալ հասարակության ընդհանուր վերաբերմունքը և զարգացման հնարավորությունները: Ազգի կրթվածության վերաբերյալ վիճակագրական վերլուծությունը, անկասկած, կլինի խիստ միակողմանի ու թերի, եթե անտեսվեն տվյալ տարածքի հիմնական ազգությունների համապատասխան ցուցանիշները, և չկատարվի համեմատական վերլուծություն: Դեռ ավելին, հիմնավորված ու օբյեկտիվ եզրակացություններ կատարելու գրավականը պետք է համարել միայն համեմատական վերլուծությունը:

Ազգերի կրթվածության մասին վերլուծություններ կատարելու և ընդհանուր պատկերացում կազմելու համար խիստ անհրաժեշտ է տարբեր տեսակի ուսումնական հաստատությունների, դպրոցական ցանցի զարգացման ընթացքի, սովորողների ազգային կազմի վերաբերյալ հարուստ տեղեկություններ ունենալը:

Հենց այս հարցերի հետազոտմանն ու լուսաբանմանն է նվիրված մեր հետազոտությունը՝ **«Կովկասի ազգությունների կրթվածության մակարդակները և դպրոցական գործի զարգացման միտումները (19-րդ դարի երկրորդ կեսի տվյալների համեմատական վերլուծություն)»**:

Հետազոտության նպատակը Կովկասում ապրող ազգությունների կրթվածության մակարդակի վիճակագրությունը գիտականորեն վերլուծելու միջոցով հայերի կրթվածության համեմատական բնութագիրը կազմելն է և 19-րդ դարի երկրորդ կեսին դպրոցական գործի զարգացման միտումների ուսումնասիրումը:

Հետազոտության օբյեկտը Կովկասում ապրող ազգությունների կրթվածությունն արտացոլող վիճակագրությունն ու դպրոցական գործն է 19-րդ դարի երկրորդ կեսին:

Հետազոտության առարկան Կովկասում ապրող ազգությունների, մասնավորապես հայերի կրթվածության ընդհանուր բնութագիրն ու 19-րդ դարի երկրորդ կեսին դպրոցական ցանցի զարգացման միտումներն են:

Հետազոտության գիտական վարկածը: Ազգի կրթվածության մասին ընդհանուր և վստահելի պատկերացումն ու նրա չափորոշիչների համակարգը կարելի է լիակատար ու անկասկածելի դարձնել՝ ընդգծված ուշադրություն ու գիտական հետազոտություն նվիրելով կոնկրետ պատմական տարածքում դպրոցական գործի զարգացման մակարդակի, միտումների ուսումնասիրությանը և միևնույն տարածքում ապրող հիմնական ազգությունների կրթվածության մակարդակների համեմատավիճակագրական վերլուծությանը՝ հիմք ընդունելով անկողմնակալ ու քննադատական մոտեցում ցուցաբերելու և օբյեկտիվ եզրակացություններ կատարելու սկզբունքը:

Հետազոտության հիմնական խնդիրները.

1. Ուսումնասիրել Կովկասի ազգությունների պատմական զարգացմանը նվիրված բազմաբնույթ ու ուշագրավ գրականությունը և համակարգել ժողովուրդների կրթվածությունն արտացոլող վիճակագրությունը:

2. Ուսումնասիրել 19-րդ դարում Անդրկովկասում դպրոցական համակարգի ծավալումը և զարգացումը:

3. Գիտական վերլուծության ենթարկել Կովկասի հիմնական ազգությունների կրթվածության մակարդակը և կազմել հայ ազգի կրթվածության համեմատական բնութագիրը:

4. Բացահայտել հայկական ժողովրդական կրթական համակարգի առանձնահատկություններն ու դրանց զարգացմանը խթանող գործոնները:

5. Բացահայտել հայ ժողովրդի կրթական համակարգի զարգացման նվաճումներն արդի պայմաններում կիրառելու հնարավորությունները և մշակել գիտագործնական հիմնավորված հանձնարարականներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել հոգեբանամանկավարժական տեսությունները և հատկապես համեմատական մանկավարժության նվաճումները, արխիվային փաստաթղթերը՝ Կովկասի ուսումնական մարզի հաշվետվությունները, Կովկասի ուսումնական մարզի հոգաբարձության տվյալները, անցյալի և ժամանակակից մանկավարժների, հետազոտողների կարծիքներն ու հայացքները: Հետազոտության համար հիմք են ծառայել կրթվածության հարցերին նվիրված գիտական հետազոտությունները, հանրագումարի բերված թվային տվյալների վիճակագրությունը:

Հետազոտական մեթոդները. Առաջադրված խնդիրները լուծելու համար կատարվել են տեսական, համեմատական, վիճակագրական վերլուծություններ, մաթեմատիկական մոդելավորում, ընդհանրացումներ, կազմվել են տարբերակային շարքեր և վիճակագրական բաշխումներ: Հիմնավորումների համար կատարվել են տարբեր բնույթի վկայակոչումներ և այլն:

Հետազոտության գիտական նորույթը. Սույն հետազոտությունը լրացնում է այն բացը, որ գոյություն ունի հայ մանկավարժության ամբողջական պատմության ոլորտում՝ կապված Կովկասում ապրող հիմնական ազգությունների կրթվածության համեմատական բնութագիրը կազմելու հետ: Հիմք ընդունելով Կովկասի ազգությունների կրթվածության մակարդակը՝ առաջին անգամ կազմվել է հայերի կրթվածության համեմատական բնութագիրը: Ամբողջական կտրվածքով առաջին անգամ են գիտական վերլուծության ենթարկվել մի շարք հրապարակումներ, որոնք նվիրված են եղել նաև ժողովրդական կրթության հարցերին՝ Կովկասի ուսումնական մարզի հաշվետվություններ, Կովկասյան օրացույցներ, Կովկասի վիճակագրական կոմիտեի տեղեկագրեր և այլն, որոնք էլ հանդիսացել են հետազոտության աղբյուրներ:

Հետազոտության տեսական նշանակությունը. Այն կնպաստի հայ մանկավարժական մտքի զարգացմանը:

Հետազոտության և համեմատական վերլուծության արդյունքում ստացված գիտելիքները կարող են որոշակի ներդրում լինել մանկավարժության պատմության մեջ:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը.</u> Հետազոտության նյութերը կարող են օգտագործվել տարբեր բուհերում կարդացվող «Հայ մանկավարժության պատմություն» դասընթացում: Հետազոտության նյութերն օգտակար կարող են լինել մանկավարժության պատմությանը նվիրված ձեռնարկներ կազմող հեղինակներին և ընթերցողների լայն շրջանակներին: Գործնականում մեր հետազոտության արդյունքները որպես մեթոդաբանական բաղադրիչ կարելի է կիրառել Ադրբեջանի կողմից այսօր իրականացվող տեղե-կատվական պատերազմին դիմակայելու և նախահարձակ լինելու, իրենց կողմից սեփական ազգի մշակույթի, պատմության, մտավոր ժառանգության մասին չափազանցված, իրականությանը չհամապատասխանող պատկերացումների մտացածին լինելը ապացուցելու նպատակով:

Հետազոտության փորձաքննությունը. Այն անցկացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2001-2003թթ.) իրականացվել է պատմական, տեսական բազմաբնույթ և ուշագրավ գրականության ու սկզբնաղբյուրների ուսումնասիրումը:

Երկրորդ փուլում (2003-2005թթ.) գիտական վերլուծության են ենթարկվել Կովկասի հիմնական ազգությունների կրթվածության ընդհանուր մակարդակները, կազմվել և համակարգվել է հայերի կրթվածության համեմատական բնութագիրը:

Երրորդ փուլում (2005-2007թթ.) բացահայտվել է հայ ժողովրդի կրթական համակարգի նվաճումներն արդի պայմաններում կիրառելու և ներդնելու հնարավորությունները, մշակվել է գիտագործնական հանձնարարականներ:

<u>Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.</u>

1. Ազգերի կրթվածության վերաբերյալ վիճակագրական բնույթի տեղեկություններ համակարգելը, գիտականորեն ու համեմատական վերլուծելն ու օբյեկտիվ ընդհանրացումներ կատարելը հետազոտության գիտական լուրջ հիմնահարց է:

2. Անվիճելի է, որ Կովկասում ապրող ազգություններից կրթության ձգտելու բացարձակ իմաստով անգերազանցելի են եղել ռուսները: Նրանց հետ առանձին դեպքերում մրցել են միայն հայերը: Զիջելով միայն ռուսներին՝ անհամեմատ բարձր ցուցանիշներ են ունեցել հայերը: Կրթության ձգտելու առումով համարյա ոչ հաշվարկելի ցուցանիշներ են ունեցել թաթարները (ադրբեջանցիները):

3. Կովկասի ուսումնական մարզի հոգաբարձուներն իրենց հաշվետվություններում ամենատարբեր առիթներով ընդգծել են հայերի կրթության ձգտելու, առաջադիմություն ցուցաբերելու մասին: Նրանց գրավոր խոսքերում մեկնաբանությունները որակ են կազմում:

4. Ազգերի կրթվածության համեմատական բնութագիրը կազմելու չափորոշիչները բազմաբնույթ են, որոնցից ցանկացածի անտեսելը կարող է դառնալ ոչ գիտական եզրակացությունների աղբյուր:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը կազմում է համակարգչային 131 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Կովկասի հիմնական ազգությունների կրթվածության մակարդակների վիճակագրությունը և վերլուծությունը»** խորագիրը կրող **առաջին գլուխը** բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ դիտարկված են **«հիմնախնդրի պատմական և մեթոդաբանական նախադրյալները»:** Հիմնավորված է, որ համեմատական մանկավարժությունը մանկավարժական գիտության առանձին բնագավառ է, որն ուսումնասիրում է աշխարհի տարբեր մասերում ու տարբեր երկրներում մանկավարժական տեսության ու պրակտիկայի համեմատական բնութագիրը, օրինաչափություններն ու զարգացման հնարավորությունները:

Ներկայացված են համեմատական մանկավարժության զարգացման փուլերը, ինչպես նաև գիտելիքների բնագավառի վերաբերյալ մի շարք տեսաբանների հայեցակարգային մոտեցումները, և հիմնախնդրի վերաբերյալ կատարված վիճակագրական մի շարք տվյալներ:

Երկրորդ ենթագլխում՝ «Կովկասի հիմնական ազգությունների տարաբնակեցման աշխարհագրությունը», ներկայացված է 19-րդ դարի երկրորդ կեսում Կովկասի ազգաբնակչության ազգային կազմի վիճակագրական տվյալները ըստ նահանգների: Ազգերի կրթվածության համեմատական բնութագիրը կազմելու գլխավոր չափանիշներից պետք է համարել տարաբնակեցման մասին ընդհանուր և ճշգրիտ տեղեկությունների վիճակագրությունը: Բնակչության տարաբնակեցումը կոնկրետ տարածքի բնակչության բաշխումն ու ձևավորված բնակավայրերի ցանցն է: Հայերի տարաբնակեցման մասին հարուստ տեղեկություններ են հաղորդում հայկական եկեղեցիները:

Երրորդ ենթագլխում՝ «Կովկասի հիմնական ազգությունների կրթվածության վիճակագրությունը և համեմատական վերլուծությունը», ներկայացված է Կովկասի հիմնական ազգությունների կրթվածության վերաբերյալ վիճակագրությունը և նրա համեմատական վերլուծությունը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ Կովկասի ազգությունների կրթվածության վերաբերյալ հարուստ վիճակագրական տեղեկություններ են բովանդակում Կովկասի ուսումնական մարզի հոգաբարձուների ծավալուն հաշվետվություններն ու կովկասյան օրացույցները: Վիճակագրական տեղեկությունների առումով առավել հարուստ են 1878թ. և հետագա

տարիների հաշվետվությունները, որոնք հարուստ նյութ են բովանդակում գործող դպրոցների տիպերի, աշակերտների քանակի և ազգային կազմի մասին: Հաշվետվություններն առատ են նաև աշակերտների առաջադիմությանը, ստուգողական գրավորների, ինչպես նաև ծրագրային թեմաներին նվիրված նյութերով: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ բերված տեղեկությունները լիովին բավարար են ընդհանուր եզրակացություններ կատարելու համար: Վստահ կարելի է հաստատել, որ ազգի գրագիտության համար անգնահատելի է տարրական կրթության դերը:

1885 թվականին ուսումնարաններում սովորել են 2467 ռուս, 897 վրացի, 1570 հայ և միայն 112 թաթար: 1878-1898 թվականների համար Կովկասի երեք ազգերի կրթվածությունը բնութագրելու նպատակով ընտրել ենք 91-ական տոկոսային թվեր, որոնց բաշխվածության պատկերը տրված է հավելվածներում: Կովկասի չորս հիմնական ազգություններից թաթարները բոլոր առումներով գրավել են վերջին տեղը: Միջնակարգ ուսումնական հաստատություններում նրանց գերազանցել են լեռնականները, հրեաները և այլ ազգերի ներկայացուցիչներ: Այդ ուսումնական հաստատություններում հայերը թաթարներին գերազանցել են ավելի քան վեց անգամ:

Հետազոտվել է սովորողների տեղաբաշխման տոկոսներն ըստ ուսումնական հաստատությունների ու ազգերի:

Չորրորդ ենթագլխում՝ «Կովկասի ուսումնական մարզի հոգաբարձուները վիճակագրության առանձին հարցերի մասին», քննարկվել է Կովկասի ուսումնական մարզի հոգաբարձուների կարծիքները առանձին հարցերի մասին: Արձանագրված է, որ մարզի հոգաբարձուների տեսադաշտից չեն վրիպել անգամ աննշան թվացող հարցերը: Նկատելի է, որ ազգությունների շարքում թաթարները գրավում են վերջին տեղը: Ռուսները նրանց գերազանցում են ավելի քան քսան, իսկ հայերը ավելի քան տասնինն անգամ:

1886 թվականին քաղաքային ուսումնարաններում հայերը թվով գերազանցել են նաև ռուսներին: Իգական գիմնազիաներում հայերը թվով 86 անգամ գերազանցել են թաթարներին:

1888 թվականին խոսելով ռեալական ուսումնարանների մասին արձանագրված են այսպիսի փաստեր՝առաջադիմության առումով առաջին տեղում են հայերը 75%, ռուսները 71, վրացիները 64 տոկոս առաջադիմություն (խոսք չկա թաթարների մասին):

Հիմնավորված է, որ Կովկասի հիմնական ազգությունների կրթվածության մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ուսման նկատմամբ նրանց ձգտումներն ունեցել են հստակ արտահայտություններ: Առաջին տեղում են եղել ռուսները, հաջորդ երկու տեղերում հայերն ու վրացիները: Ադրբեջանցիները զիջել են նաև փոքրաթիվ ազգություններին:

Հետազոտության **«Ազգերի կրթվածության հիմնական չափանիշները» խորագիրը կրող երկրորդ գլուխը** կազմված է վեց ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Ժողովրդական կրթության վիճակը Անդրկովկասում 19-րդ դարում»,** անդրադարձ է կատարվել 19-րդ դարի առաջին և երկրորդ կեսերին Ժողովրդական կրթության վիճակը Անդրկովկասում:

Որպես ազգի կրթվածության կարևոր չափանիշ ենք համարել տարբեր տիպի ուսումնական հաստատություններում նրա ունեցած սովորողների

առկայությունը, քանակական կազմը: Բացահայտվել և ներկայացվել են հայերի տարաբնակեցման հետ առնչվող դպրոցների թվաքանակի, սովորողների ազգային կազմի հարցերը, ուսումնասիրվել է ժողովրդական կրթության ընդհանուր վիճակը Անդրկովկասում:

Հիմնավորել ենք, որ Անդրկովկասի բազմաթիվ վայրերում հայկական դպրոցները գործել և համագործակցել են ռուսական, վրացական, ադրբեջանական դպրոցների հետ կողք-կողքի՝ ունենալով երբեմն ընհանուր ուսուցիչներ և վարիչներ:

Դիտարկվող ժամանակահատվածում Կովկասի ուսումնական օկրուգը բաժանվում էր ուսումնարանների հինգ դիրեկցիաների. 1. Թիֆլիսի, 2. Քութայիսիի, 3. Շամախի-Դերբենդի, 4. Ստավրոպոլի, 5. Սևծովյան զորքի երկրի, որոնցից յուրաքանչյուրը կառավարում էր համապատասխան նահանգի ուսումնարանները:

Երկրորդ ենթագլխում՝ «Դպրոցական ցանցի ծավալումը որպես ազգի կրթվածության անհրաժեշտ պայման» հիմնավորվում է, որ դիտարկվող ժամանակաշրջանում հստակեցված չէին մասնավոր դպրոցների չափանիշները, արքունի դպրոցական և այլ իշխանությունների, հայ եկեղեցու և նրանց ներկայացուցիչների միջև լուրջ պայքար է եղել, թե հոգևորականների, քահանաների և նաև այլ սոցիալական կարգավիճակ ունեցողների կողմից, բացված դպրոցները համարվում էին մասնավոր, թե եկեղեցական, ասինքն՝ ենթարկվելու էին դպրոցական իշխանություններին, թե հայ եկեղեցուն:

Սակայն դպրոցական համակարգի նման ընդլայնումը ամեն դեպքում չկարողացավ ամբողջությամբ լուծել Անդրկովկասի և ողջ Կովկասի ժողովուրդների կրթական մակարդակի բարձրացման խնդիրը: Նշված ժամանակաշրջանում Անդրկովկասի արքունի դպրոցների,դպրոցական իշխանությունների ենթակայությամբ գործող մասնավոր ուսումնարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի մեջ հայերինը ամենաշատն է:

Այնուամենայնիվ, կարելի է վստահ պնդել, որ մտավոր զարգացման անհրաժեշտությունը միշտ էլ հայերին հատուկ է եղել և ազգային կերպ է համարվել: Հեթանոսության շրջանում էլ հայերի մոտ տարածվել է լուսավորությունը: Հայերն ազգի կրթվածության շատ կարևոր ու էական չափանիշ են համարել դպրոցական ցանցի ծավալը:

Իհարկե չպետք է ենթադրել, որ դպրոցական անհրաժեշտ ցանց ստեղծելու գաղափարը հայերի մոտ չի ունեցել խոչընդոտներ: Անընդմեջ պատերազմների, արշավանքների պատճառով հայկական դպրոցներ հաճախ չեն բացվել, իսկ բացվածներն էլ փակվել են, բոլոր դեպքերում դպրոցներ բացելու պայքարը հայերի մոտ երբեք չի մարել:

Երրորդ ենթագլխում ներկայացված է **«Առանձին ուսումնական հաստատությունների սովորողների ազգային կազմի վիճակագրությունը»:** Որպես ազգի կրթվածության կարևոր չափանիշ առանձնացրել ենք տարբեր տիպի ուսումնական հաստատություններում սովորողների թիվը, ազգային կազմը:

Կարծում ենք, որ նման վիճակագրությունը պատասխան է տալիս երկու բնույթի կարևոր հարցի՝ հստակ և հիմնավոր տեղեկություններ հաղորդելով հանդերձ՝ բացահայտում է հայերի նկատմամբ ցարական

կառավարության կողմից տարրական վերաբերմունք ցուցաբերելու հետևանքները:

Հետազոտությամբ հիմնավորվել է, որ հայերն առանձին ուշադրություն են դարձրել նաև մասնագիտական կրթությանը: Հայ սովորողները բոլոր հաստատություններում գերազանցել են թաթարներին, վրացիներին իրենց մտավոր և ստեղծագործական կարողություններով: Հայկական վարժարանները աշխատում էին գերմանական միջնակարգ դպրոցի ծրագրով: Որպես օրինակ ներկայացված է Սանասարյան վարժարանի ծրագիրը: Սանասարյան վարժարանի մասին Դ.Է. Նաումանն ընդգծել է, որ այն համապատասխանում է Գերմանական միջնակարգ դպրոցի ծրագրին: Դպրոցն աշխատում է Լայպցիգի դպրոցի օրինակով:

Համեմատության համար բերված են Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր դպրոցի, Ներսիսյան հոգևոր դպրոցի, Երևանի հայոց հոգևոր թեմական և այլ դպրոցների տվյալները: Դիտարկվել է նաև Արցախում դպրոցական ցանցի և կրթական գործի վիճակը: Հիմնավորվել է, որ դպրոցը Արցախում սկզբնավորվել է դեռևս վաղ շրջանում՝ Ամարաս, Գտչա, Սուրբ Հակոբ, Մեծարանց և այլ վանքերում: Դպրոցներ են հիմնվել նաև Շուշիում, Ղարաբաղի որոշ գյուղերում: Շուշիում, Նուխիում և այլուր բացվում են մասնավոր դպրոցներ: Նշենք, որ Ղարաբաղի թեմում բացված հայալեզու դպրոցները, որպես կանոն, ենթարկվում էին Շուշիի թեմական դպրոցին: 1836թ. մարտի 11-ին ցարական կառավարությունը ընդունում է «Հայ լուսավորչական հավատի հոգևոր կառավարման կանոնադրությունը» կամ «Պոլոժենին»: Վերջինս իրավունք էր տալիս բոլոր հայ թեմերում եկեղեցիներին կից հիմնել բազմաթիվ ծխական դպրոցներ հոգևոր իշխանության թույլտվությամբ և մեկական թեմական դպրոց յուրաքանչյուր թեմում:

Չորրորդ ենթագլխում՝ «Իգական սեռի կրթվածությունը որպես ազգի կրթվածության անհրաժեշտ պայման» ընդգծվում է, որ որ հայ կանայք հաճախակի են դուրս եկել ընտանեկան նեղ շրջանակներից և կատարել հասարակական գործունեություն, որը, իհարկե, կրթվածության հետևանքն է: Բավական է նշել, որ եթե 1872 թվականի հունվարի մեկի դրությամբ Կովկասի ուսումնական հաստատություններում սովորել են 2403 հայուհի, ապա մեկ տարում նրանց թիվը հասել է 3551-ի:

Հիմնավորվում է, որ հայ ժողովուրդը իգական սեռի կրթվածությունը համարել է ազգի կրթվածության անհրաժեշտ պայման: Ուսումնասիրությունները վկայում են, որ հայկական դպրոցներում որակ են կազմել աշակերտուհիների թիվը, քիչ չեն եղել նաև օրիորդաց դպրոցները:

Ալեքսանդրապոլի Ս.Նշան եկեղեցու օրիորդաց Սահականուշյան ծխական դպրոցը (բացվել է 1873 թ.) 1875թ. ունեցել է 55 աշակերտուհի, 1894-ին ունեցել է 245 աշակերտուհի: Երևանի Գայանյան օրիորդաց միջն. դպրոցը (բացվել է 1866 թ.) 1867թ. ունեցել է 14 աշակերտուհի, 1881-ին -103,1889-ին 160 աշակերտուհի: Հետազոտությամբ բացահայտվել է, որ 1878-1888 թվականներին իգական գիմնազիաների սովորողների 65,7 %-ը կազմել են ռուսներ, 11,9 %-ը՝ վրացիներ, 13 %-ը՝ հայեր, 0,4 %-ը՝ թաթարներ, 0,5 %-ը՝ լեռնականներ, 2,5 %-ը՝ հրեաներ, 6 %-ը՝ այլ ազգություններ: Հայուհիներն

ավելի քան 32 անգամ գերազանցել են թաթարներին և ավելի են եղել, քան վրացուհիները: Այդ թվերը բնորոշ են եղել բոլոր տարիների համար:

1888-1889 թվականներին հայուհիների թիվը խիստ աճել է, իսկ թաթարներինը՝ նվազել.

Ռուսն.	Վրաց.	Հայեր	Թաթար.	Լեռնակ.	Հրեան.	Այլ ազգ
53,1	13,4	22,5	0,3	0,8	3,9	6

Հայուհիները թաթարներին գերազանցել են 75 անգամ:

Հայ աղջիկներին կրթություն տալու գործում բեղմնավոր գործունեություն են ծավալել բարեգործական ընկերությունները: Կարելի է վստահ արձանագրել, որ կրթվածության առումով հայուհիները միայն զիջել են ռուսներին: Կանանց կրթության հիմնահարցերին անդրադարձել են Ս. Նազարյանը, Մ.Նալբանդյանը, Ս.Շահազիզը, Պ.Պռոշյանը, Ղ.Աղայանը, Գ.Արծրունին, Ռաֆֆին և շատ ուրիշներ:

Հինգերորդ ենթագլխում՝ «Փաստական տվյալներ ազգերի կրթվածության մակարդակների վերաբերյալ», ներկայացված են փաստական տվյալներ ազգերի կրթվածության մակարդակների վերաբերյալ: Բերված են այլ ազգի հասարակական գործիչների վկայություններ ազգերի կրթվածության մասին: Այսինքն՝ օտարերկրացիներն անգամ գնահատում էին հայերի կրթվելու ձգտումը և նրանց համարում աշխարհի ամենալավ և ամենազարգացած ազգերից մեկը:

Նշված փաստերը վկայում են, որ ադրբեջանցիների այն պնդումները, որ իրենք մեր տարածաշրջանում քաղաքակրթության, գրագիտության և մշակույթի հիմնադիրներ և տարածողներ են, չեն համապատասխանում իրականությանը և լոկ բարբաջանքներ են:

Վեցերորդ ենթագլխում՝ «Ազգերի կրթվածության այլ չափանիշներ» ներկայացված է նաև ազգերի կրթվածության այլ չափանիշներ:

Նշվում է նաև, որ ազգի կրթվածության կարևոր չափանիշ պետք է համարել ազգաբնակչության համար գործող ուսումնական հաստատությունների թիվը: Ուսումնարանների թվով կարելի է եզրակացնել ժողովրդի լուսավորության մասին: Չէ՞ որ ժողովուրդը ոչ միայն կրթելու օբյեկտ է, այլ նաև կրթող, միտք գրգռող, միտք բեղմնավորող է: Որքան բարձր է ժողովրդի կրթվածության աստիճանը, այնքան ավելի է արժևորվում լուսավորության գործոնը:

1870 թվականին հայկական ուսումնարանների թիվը հասել է 138-ի (127-ը՝ տղաների և 11-ը՝ օրիորդների համար):

1881 թվականին ուսումնարանների թիվը դարձել է 330 (247-ը՝ տղաների և 83-ը՝ աղջիկների համար):

Հիմնավորվում է, որ լուսավորչական գործունեություն ծավալելու ուղղությամբ անգնահատելի դեր են ունեցել գրադարանները: Գրադարանները կազմակերպել են կիրակնօրյա դպրոցներ ու դասարաններ, տարբեր բնույթի դասընթացներ, ժողովրդական ընթերցումներ, հրատարակել են հանրակրթական գրականություն: Որակ են կազմել նրանց կազմակերպած

երեկույթները: Գրադարանները հաճախակի են ձգտել ծանոթանալ ընթերցողների տեսակետներին և կազմակերպել բանավեճեր:

Թիֆլիսի էժանագին հայկական գրադարանից 1891թ. հունվարի մեկից մինչև 1892 թ. հունվարի մեկը օգտվել են 580 բաժանորդ (80 կին):

Բաժանորդներից 294 եղել են աշակերտներ, իսկ 33-ը՝ աշակերտուհիներ: Գրադարանից օգտվել են 59 գործակատարներ, 41 արհեստավորներ, 33 վաճառականներ, 29 օրիորդներ և այլն: Հայ գործիչները, գրադարանները համարելով լավ գործերի սկիզբ, լուրջ նշանակություն են տվել հրապարակային դասախոսություններ կազմակերպելուն:

Ժողովրդի կրթվածության մակարդակը բարձրացնելու նպատակով շատ վայրերում հիմնադրվել են ժողովրդական համալսարաններ: Շատ համալսարաններ են ունեցել հայկական բաժիններ, որոնք ունեցել են մեծ թվով ունկնդիրներ:

1895 թ.-ին Երևանի նահանգի 23 տարրական դպրոցներ ունեցել են գրադարաններ, որոնք ծառայել են նաև ծնողներին: Հայ պարբերական մամուլի էջերում որակ են կազմում ընդհանուր կամ մասնագիտական բնույթի բարեգործական ընկերությունների գործունեությունը արտացոլող հաղորդումները:

1882 թվականին գիմնազիական և ռեալական ուսումնարանների համար հայտնի են այսպիսի տվյալներ. մեկ սովորող՝ բնակչության հետևյալ թվերից

Ազգեր	Գիմնազիաներում սովորողներ	Ռեալական ուսումնարաններում սովորող
Եվրոպացիներ	207	407
Ռուսներ	866	1100
Վրացիներ	1248	9000
Հայեր	856	1300
Թաթարներ	9357	8000 (58, 57)

Դժվար չէ նկատել, որ հայերը գրեթե չեն տարբերվել ռուսներից և ավելի քան 11 անգամ գերազանցել են թաթարներին, եթե հիմք ընդունենք գիմնազիական կրթությունը:

1884 թվականի տվյալներով բնակիչների թվին մեկական սովորող էր ընկնում.

Ռուս	Վրացի	Հայ	Հրեա	Մահմեդական
293	553	242	142	5681

Դժվար չէ նկատել, որ եթե հայ մտավորական գործիչները 242 բնակչից մեկ սովորող ունենալն անբավարար են համարել, և դա ճիշտ է, ապա

մահմեդականների համար պետք է ընդգծեին, որ կրթական համակարգ գոյություն չի ունեցել:

Բացահայտված է, որ ազգերի կրթվածությունն ապահովելու գործընթացում բացառիկ դեր են ունեցել տարբեր բնույթի ընկերությունները, թատրոնները՝ որպես կրթության և դաստիարակության հզոր օջախ: Չի կարելի առանձին նշանակություն չտալ օգտակար գիտելիքներ տարածելու նպատակով հիմնադրված ընկերությունների գործունեությանը, որոնց նպատակը եղել է գրադարաններ ու ընթերցարաններ հիմնելը և դասախոսություններ կազմակերպելը:

Ընկերությունների մասին ընդանուր պատկերացում տալու նպատակով նշենք, որ 1851 -1908 թվականին միայն Կարին քաղաքում կազմավորվել է 17 ընկերություն, որոնցից յուրաքանչյուրի նպատակը եղել է քաղաքի ու նահանգի կրթական ու մշակութային կյանքը աշխուժացնելը: Գրադարանները կազմակերպել են կիրակնօրյա դպրոցներ ու դասարաններ, տարբեր բնույթի դասընթացներ, ժողովրդական ընթերցումներ, հրատարակել են հանրակրթական գրականություն: Մենք ազգերի կրթվածության չափանիշ համարել ենք տարբեր բնույթի աշխարհանդեսներում նվաճումներ ձեռք բերելը, տարածքների, հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունները, պարբերականները, խմբագրությունների և ընթերցողների կապերը:

Հայ հասարակական կյանքում խաղացած կարևոր դերով առաջնակարգ ու բացառիկ դեր են կատարել հրապարակային դասախոսությունները:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հայերն առանձին ուշադրություն են ցուցաբերել որբանոցների նկատմամբ: Այսպիսով, նշված փաստերը վկայում են, որ հայ ազգաբնակչությունը և հայ էթնոսն, ընդհանրապես, իրենց կրթական մակարդակով, ազգային մտածելակերպով, մշակույթով, արժեհամակարգով անհամեմատ բարձր դիրքերի վրա են եղել, քան Կովկասի մյուս ազգերը, այդ թվում նաև ադրբեջանցիները:

Ազգի կրթվածությանը բնորոշ առանձնահատկություններից է թատրոնի գործունեությունը: Թատերական ներկայացումների հնարավորությունները ցույց տալու նպատակով հրապարակվել է դրամատիկական երկերի ցանկ: Հիմնավորվում է, որ դարեր ի վեր թատրոնը հայերի կողմից դիտվել է որպես կրթության ու դաստիարակության հզոր օջախ: Դեռ 1668 թվականին Լվովում հիմնադրվել է հայկական դպրոցական թատրոն: Թատրոնի անփոխարինելի դերի մասին արտահայտվել են շատ հայ գործիչներ: Ստ. Նազարյանն այն համարել է դաստիարակության դպրոց, Մ. Նալբանդանը՝ բարոյականության ահեղ դատարան, Բ. Սարգսյանը՝ դեպի գեղեցիկը տանող ուղի և այլն: Հայերի համար պրակտիկա է եղել նաև շրջիկ թատերական խմբեր ունենալը:

Հետազոտության առաջադիր խնդիրների լուծումը տրված է եզրակացություններում: Խոսելով ազգի կրթվածությանը խթանող գործոնների մասին՝ չի կարելի անտեսել գրքավաճառության, ժողովրդական տների, ամենատարբեր բնույթի երեկոների ու ցուցահանդեսների, ընդհանուր ու

մասնագիտական դասընթացների, ժողովրդական համալսարանների, շրջիկ մասնագետների, գեղարվեստական միջոցառումների, ամենատարբեր բնույթի շփումների, ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքներ տարածելու և այլ գործոնների հնարավորությունները: Այսպես, օրինակ՝ դեռ 1878 թվականին է հրատարակվել Երևանի տան կանոնադրությունը: Ամենատարբեր բնույթի երեկոներին լուրջ տեղեր են հատկացվել կոլեկտիվ քննարկումներին ու բանավեճերին: Հայ իրականության մեջ հաճախակի են կազմակերպվել գյուղատնտեսական, մանկավարժական, հաշվապահական դասընթացներ: Չի կարելի առանձին նշանակություն չտալ «Երևանի օգտակար գիտելիքներ տարածելու» ընկերության գործունեությանը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հայերն աճող հետաքրքրություն են ցուցաբերել դեպի լուսավորչական նպատակներ ունեցող միջոցառումները: Հայերի մոտ ընդունված է եղել հրապարակային դասեր կազմակերպելը: «Արարատը» (1910, 4, 351) արձանագրել է, որ Թիֆլիսի Ս. Սարգսի ուսումնարանի հայերենի ուսուցիչը «գրել կարդալու օրինակելի դաս տուեց հրապարակաւ Յովնանյան ուսումնարանի դահլիճում»: Դասը նվիրված է եղել «ծ» տառին և վարել է լավագույն ուսուցիչներից մեկը: Հոդվածի հեղինակ Ս. Մանդինյանը նշել է, որ այդ դասը երկրորդ փորձն էր:

Հայ ժողովրդի կրթվածության մակարդակը նաև դպրոցական գործին նվիրված բազմաթիվ բարերարների գործունեության արգասիքն է:

Ազգերի կրթվածության կարևոր չափանիշներից մեկը պետք է համարել նրանց խոսքերի ու գործերի համապատասխանությունը: Հայերը տարբեր առիթներով ընդգծել են, որ ազգերի, այդ թվում նաև նրանց ընտանիքների ավելացումը խոչընդոտելու համար չպետք է ստեղծել արհեստական դժվարություններ:

1897 թվականին 1886 թվականի համեմատությամբ (11 տարի) Կովկասի ազգաբնակչությունն աճել է 27%-ով: Բաքվի նահանգի 50550 հայերն աճ չեն ունեցել [25, 1904, 163]:

1828 թվականին Ատրպատականից, որն ամենահին ժամանակներից հայտնի է եղել իբրև հայաշատ երկիր, գաղթել է 8249 ընտանիք՝ շուրջ 70-80 հազար հայ: Ատրպատականում 17-րդ դարում եղել է մոտ 300 հազար հայ:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ համեմատության մեթոդն առավել օգտակար է լինում, երբ օգտագործվում են մաթեմատիկական վիճակագրության բանաձևերը, որոնք դառնում են ուսումնասիրության միջոց:

Մենք գտնում ենք, որ համեմատական մանկավարժության հիմնահարցերը պետք է տեղ գտնեն ընդհանուր մանկավարժության դասընթացներում:

Աշխատանքի արդյունքում մեր կողմից կատարվել են հետևյալ **եզրակացությունները.**

1. Ազգերի կրթվածության համեմատական բնութագրի համար անհրաժեշտ չափորոշիչները բազմաբնույթ են, և դրանցից որևէ մեկի անտեսելը կարող է դառնալ ոչ գիտական եզրակացությունների աղբյուր: Անժխտելի է ուսումնական հաստատություններում սովորողների

թվաքանակների, սովորողների ազգաբնակչության թվաքանակների հարաբերության, դպրոցական ցանցի առկայության վերաբերյալ տվյալների ու գործիչների տեսակետների բնույթը:

2. Կովկասի հիմնական ազգությունների կրթվածության ձգտելու առումով անգերազանցելի են եղել ռուսները, որոնք կազմել են սովորողների շուրջ 50, իսկ առանձին դեպքերում՝ նաև ավելի տոկոսը: Զիջելով միայն ռուսներին՝ անհամեմատ բարձր ցուցանիշներ են ունեցել միայն հայերը: Հիմնավորված կարելի է համարել, որ հայ սովորողները քանակական առումով շուրջ երկու տասնյակ անգամ գերազանցել են կովկասյան թաթարներին՝ ադրբեջանցիներին: Տվյալներն առավել ակնառու են դառնում, եթե քննարկված է ազգաբնակչության և սովորողների թվերի հարաբերության հարցը:

1888 թվականին Կովկասի ուսումնական մարզի հոգաբարձուն հանրագումարի բերելով նախորդ 10 տարիների սովորողների ազգային կազմի տվյալները, հրապարակել է այսպիսի տվյալներ (տոկոսներով).

	1879	1880	1881	1882	1883	1884	1885	1886	1887	1888	Միջինը
Ռուս.	48,4	49,1	45,5	46	43	54,3	53,8	50,3	51	51,8	49,3
Վրաց.	13,8	14,6	15,6	17,2	17,1	20,4	18,9	19,5	20,4	20,2	17,8
Հայ	26,5	25,3	26,4	25	27,2	12	14,1	17,1	14,8	18,7	20,4
Ադրբ.	1,9	2	2	2,2	2,5	3	2,9	2	2,9	2,8	2,5

3. Առանձին ուշադրության է արժանի կանանց կրթվածության հարցը: Այս ոլորտում էլ հայերը, զիջելով միայն ռուսներին, մի քանի տասնյակ անգամ գերազանցել են ադրբեջանցիներին, ինչպես նաև վրացիներին: Կարելի է վստահ պնդել, որ հայերը հավատարիմ են մնացել ուշագրավ պատգամի՝ տղա կրթելն անհատ կրթել է, աղջիկ կրթելն ազգ կրթել է: Սովորողներ ունենալու առումով հայերը գերազանցել են ադրբեջանցիներին նաև Բաքվի ուսումնական հաստատություններում:

1908 թվականին իգական գիմնազիաներում սովորել են 747 հայուհի և 101 ադրբեջանուհի: Այս ցուցանիշն ուղղակիորեն կապված է ազգերի մատաղ սերնդի ներկայացուցիչների կրթական ցենզի հետ, քանի որ կրթական բարձր մակարդակ ունեցող ապագա մայրերը կկարողանան իրենց երեխաների մոտ դրական վերաբերմունք ձևավորել ուսման նկատմամբ, կհաղորդեն նրանց համապատասխան գիտելիքներ, կկազմակերպեն նրանց ուսումնառության գործընթացը:

4. Ազգերի կրթվածության կարևոր չափանիշ պետք է համարել ազգաբնակչության և սովորողների թվերի հարաբերակցությունը:

1880 թվականին բնակիչներից սովորել է մեկը.

Ռուս	Վրացի	Հայ	Ադրբեջ.	Լեռնական	Հրեա	Այլ ազգ.
42	96	44	861	606	69	80

Դժվար չէ նկատել, որ ադրբեջանցիներն ուսման ձգտելու առումով գրավել են վերջին տեղը: Հայերն ադրբեջանցիներին գերազանցել են 19 անգամ:

5. Պարբերականների հրապարակումներն ըստ լեզուների.

	էջեր	Օրինակներ	Անուն	Մեկ անձի հաշվով
Ռուսերեն	5852	10284	16	593 էջ
Վրացերեն	2944	2320	7	459
Հայերեն	5358	9460	11	588
Ադրբեջաներեն	44	210	1	38

Ազգերի կրթվածության չափանիշ են նաև պարբերականների հրապարակումները: Վերոնշյալ աղյուսակում ներկայացված են 1884 թվականի պարբերականների հրապարակումներն՝ ըստ լեզուների:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Դպրոցական ցանցը՝ ազգի կրթվածության ցուցիչ, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2007թ., N 2, էջ 104-106:
2. Ազգի կրթվածության չափանիշը իգական սեռի կրթվածությունն է, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2007թ., N 2, էջ 106-108:
3. Վկայակոչումներ ազգերի կրթվածության մասին (սոցիոլոգիական վերլուծություններ), ՀՀ Մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիա (ՀԿ), գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2007թ., N 6, էջ 85-90:
4. 19-րդ դարի երկրորդ կեսի կովկասահայ լուսավորական-կրթական շարժման երախտավորները, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ 2010թ., N 4, էջ 212-216:

АКОПЯН АННА АБУЗЕТОВНА

УРОВНИ ОБРАЗОВАННОСТИ НАРОДНОСТЕЙ КАВКАЗА И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ШКОЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ДАННЫХ ВТОРОЙ ПОЛОВИНЫ 19-ГО ВЕКА)

Диссертация на соискание ученой степени кандитата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”.
Защита диссертации состоится 28.03.13. в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика”, по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу:0010 г. Ереван. ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Ввиду того, что исследователями истории армянской педагогики недостаточно изучен вопрос первостепенной важности, а именно необходимость составления характеристики уровня образованности нации, мы решили посвятить наше исследование этой проблеме.

Различные исследования свидетельствуют, что составление сравнительной характеристики описания образованности нации может послужить стимулом для возможного интеллектуального развития армян.

В настоящих реалиях, когда Азербайджан всеми возможными информационными технологическими и иными способами ведет войну, дабы доказать свое историческое преимущество по отношению к армянам, преувеличивая и фальцифицируя факты относительно культуры, истории, интеллектуального наследия своей нации, наше исследование приобретает наибольшую актуальность.

Для определения уровня образованности нации необходимо, в первую очередь, изучить и сравнить, базируясь на основных подходах педагогики особенности развития, прогресс школьного обучения в определенный период времени и в конкретном регионе. Результатом нашего исследования мы даем не только представление общей картины школьной системы в виде суммарных статистических данных и обобщающих умозаключений, качественных характеристик и оценок, а также краткое изложение истории известных учебных заведений и школ.

Цель исследования. Составление сравнительного описания уровня образованности армян на основе научного анализа статистических данных степени образованности народов, живущих на Кавказе и изучение тенденции развития школьного обучения во второй половине 19-го века.

Основные задачи исследования.

1. Изучить разнообразную и научно-популярную литературу и иные исторические источники, посвященную истории, развитию народов Кавказа и систематизировать статистистические данные касательно образованности народов.

2. Исследовать развитие и распространение школьной системы на Закавказье в 19-м веке.
3. Научно проанализировать уровень образованности основных народностей Кавказа и составить сравнительную характеристику образованности армянского народа.
4. Выявить особенности армянской народной образовательной системы и факторы, способствующие ее развитию.
5. Выявить возможности использования в нынешних условиях достижений образовательной системы армянского народа и разработать научно обоснованные и практические рекомендации.

Научная новизна исследования. Данное исследование восполняет пробел, существующий в истории армянской педагогики, связанный с составлением сравнительной характеристики уровня образованности народностей, живущих на Кавказе. На основе уровня образованности Кавказских народов впервые была разработана сравнительная характеристика образованности армянского народа. Впервые были научно проанализированы публикации, посвященные вопросам национальной образованности, а именно отчеты по учебной части, кавказские календари, бюллетени комитета по статистике Закавказья и т.д., которые и послужили источниками для данного исследования.

Теоретическое значение исследования. Проведенное исследование имеет целью способствовать развитию армянской педагогической мысли. Полученные в результате исследования и сравнительного анализа знания могут внести вклад в историю педагогики.

Практическое значение исследования. Материалы проведенного исследования могут быть использованы в различных ВУЗ-ах в лекционных курсах по истории армянской педагогики, а также будут полезны широкому кругу авторов пособий по истории педагогики и читателям. В практике результаты нашего исследования могут быть использованы в информационной войне с Азербайджаном в доказательство несоответствия реальности и выдуманности Азербайджаном понятий относительно их культуры, интеллектуального наследия и истории.

Содержание и объем исследования. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы и приложений. Объем работы составляет 131 страницу.

ANNA ABUZET HAKOBYAN

EDUCATIONAL LEVEL OF THE CAUCASIAN NATIONALITIES AND THE TRENDS OF SCHOOLING DEVELOPMENT (COMPARATIVE ANALYSIS OF DATA FOR THE SECOND HALF OF THE 19TH CENTURY)

Thesis for degree of candidate of pedagogical sciences 13.00.01- "Methods of teaching and education " (The English language).

The defence of the thesis will be held on March 28, 2013 at 14:00 p.m, at the session of the Special Board HAC (Higher Attestation Commission) RA 020 "Pedagogy" to award degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: - 0010, st. Tigran Mets 17, Yerevan.

SUMMARY

The relevance of the research.

The history of Armenian Pedagogy is unique and varied. It should be noted that, in general, the researchers have overlooked the main issue, namely, the necessity of the comparative description of the nation's educational level. The very reasons are highlighted in the above-mentioned research.

Various studies indicate that the composition of comparative characteristics of nation's education is regarded to be the very for the development of the intellectual potential of the Armenians.

In today's reality, when Azerbaijan conducts media war by all possible technological and other methods in order to prove its historical advantage, by exaggerating the facts and creating unreal illusions regarding its culture, history and intellectual heritage of its nation, our study is acquiring more important relevance and topicality.

In order to accurately define the level of nation's education, first of all, we are supposed to study and compare the school situation, the process, and the peculiarities of the schooling progress at a particular time in a particular region based on the core approaches of comparative pedagogy. In our research, we pursue to show not only the picture of the school system in the form of summarized statistical data, other conclusions and evaluations, but also to present a summary of the history of famous educational institutions and schools.

The aim of the research is the preparation of comparative description of education of Armenian people based on scientific analysis of statistics related to the educational level of the peoples living in the Caucasus and tendencies of schooling development in the second half of the 19th century.

The main objectives of the research:

1. To explore the diverse and fascinating literature and historical sources dedicated to the development of the Caucasian nations; as well as to systematize the data regarding the education of the peoples.
2. To study the development and expansion of the schooling system in the Caucasus in the 19th century.

3. To analyze scientifically the educational level of the Caucasian peoples; as well as to make a comparative description of education of the Armenian people.
4. To reveal the features of the Armenian national educational system and the factors contributing to its development.
5. To reveal opportunities of the educational achievements of the Armenian people to be benefited by in the current situation; as well as to develop a set of scientific tasks.

The scientific innovation of the research.

This research fills a gap in the history of Armenian pedagogy contributing to to the comparative characteristics of the educational level of the Caucasian peoples. The first comparative characteristics of the Armenian people education level have been elaborated based on the educational level of the Caucasian peoples. Several scientific publications referring to the issues of national education, i.e. reports on teaching, Caucasian calendars, bulletins of Caucasus Statistics Committee, etc., have been analyzed, which were also used as the sources for our research.

The theoretical importance of the research.

The research aims to have its contribution to the development of the Armenian educational thought. The knowledge gained from the research and comparative analysis may support the history of pedagogy as well.

The practical importance of the research.

The materials of the research can be used in different high schools at lectures on the history of Armenian pedagogy, as well as are considered to be the crucial source for those interested in the history of pedagogy. In practice, the output of our study can be used in the media war with Azerbaijan for providing proofs of Azerbaijan's fabrications regarding their cultural and intellectual heritage and history.

The structure of the research consists of introduction, two chapters, conclusion, bibliography and appendices. The dissertation is comprised of 131 pages.